

h.470918
13-12-2021թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողով

Դիմող՝ ԷԼԻՆԱ ԳՅՈՒՐՉՅԱՆ
ՀՀ քաղաքացի

Հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. ՆՐԲ., 8,
տարածք 3,
ldpf.foundation@gmail.com : +37493555875

ԴԻՄՈՒՄ

**ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Նախագահ Տիգրան Մուկուչյանին**

Դիմող՝

դիտորդ Նվեր Շալիկոյի Ալոյան

(«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ)

Հասցե՝ Կոտայքի մարզ, գյուղ Նոր Գեղի, Յուրի Երիցյանի փողոց 41

Ծանուցման հասցե՝

ք.Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3

Հեռ.՝ 094 597 995, 093 515600, 093865654

Էլ. հասցե՝ d.gyurjian@gmail.com

ԴԻՍՈՒՄ-ԲՈՂՈՔ

Թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի

11.12.2021թ. թիվ 26-Ա որոշման դեմ

1. Թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովը (այսուհետև՝ նաև՝ Հանձնաժողով կամ Տարածքային ընտրական հանձնաժողով) 11.12.2021թ. կայացրել է թիվ 26-Ա որոշումը, որով մերժել է «Թրանսփարենսի հնթերնեշնլի հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության դիտորդ՝ Նվեր Շալիկոյի Ալոյանի 07.12.2021թ. դիմում-բողոքի պահանջը, մասնավորապես՝ թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովը եզրահանգել է. *«թիվ 29/36 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ռուզան Էդիկի Աբգարյանը թույլ չի տվել Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում...»:*
2. 07.12.2021թ. դիմում-բողոքը ներկայացված է եղել հետևյալ բովանդակությամբ.

2.1. 05.12.2021թ. Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում «Թրանսփարենսի հնթերնեշնլի հակակոռուպցիոն կենտրոն» և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպությունները «Ականատես» դիտորդական նախաձեռնության շրջանակներում դիտորդական առաքելություն են իրականացրել թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում գտնվող մի շարք ընտրական տեղամասերում:

2.2. 05.12.2021թ. ժամը 16:30-ի սահմաններում ես, Նվեր Շալիկոյի Ալոյանս, որպես «Թրանսփարենսի հնթերնեշնլի հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ դիտորդ ներկայացել եմ Կոտայքի մարզի Գետարգել գյուղում գտնվող թիվ 29/36 ընտրատեղամաս և արձանագրել, որ տեղամասում գտնվում են «Քաղաքացիական պայմանագիր» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների երկուական վստահված անձինք, որոնց տվյալները գրանցված են եղել նաև տեղամասի գրանցամատյանում (առկա է լուսանկար): Ես և իմ հետ ներկայացած մյուս դիտորդ Նարինե Ստեփանի Հովհաննիսյանը տեղեկացրել ենք հանձնաժողովի նախագահին խախտման մասին և պահանջել ենք գրանցամատյանում գրանցել մեր գնահատականը, ինչին ի պատասխան վերջինս սկսել է վիճաբանել մեր հետ, մասնավորապես նշել է, որ մենք իրավունք չունենք նկարահանել քվեարկության սենյակը, դժգոհել է, որ մենք մեջքով ենք կանգնել հանձնաժողովի անդամներին և այլն: Մեր հետ սկսել են վիճաբանել նաև վստահված անձինք՝ իրենց չբարևելու պատրվակով: Հանձնաժողովի նախագահն ու վստահված անձինք այդ կերպ փաստացի ճնշում են գործադրել մեր վրա, ինչի արդյունքում մենք փաստացի չենք կարողացել իրականացնել տեսանկարահանում և պատշաճ կատարել մեր դիտորդությունը:

Հանձնաժողովին ներկայացվել են հետևյալ պահանջները. «Ձեռնարկել միջոցներ՝

1. վերոգրյալ խախտումները համապատասխան փաստաթղթերում արձանագրելու. արդյունավետ քննության և օրենսդրությամբ սահմանված

միջոցների ձեռնարկման ուղղությամբ.

2. խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու պատասխանատու անձանց համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.
3. ըստ անհրաժեշտության, այդ թվում՝ քրեաիրավական բնույթի խախտումները վերահասցեագրել ըստ ենթակայության.
4. քննարկել և գնահատել հիշյալ խախտումների ազդեցությունը քվեարկության արդյունքների վրա.
5. համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ:

3. Թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումներն ու եզրահանգումները.

3.1. Բողոքարկվող որոշումից և վարչական վարույթի նյութերից բխում է, որ վարչական վարույթի շրջանակում գրավոր բացատրագրեր են ներկայացրել միայն հանձնաժողովի անդամ Արտեմ Թումանյանը և հանձնաժողովի քարտուղար Գ.Ազիզյանը, որոնց բացատրությունները չեն պարունակում դիտորդի կողմից հանձնաժողովի գրանցամատյանում իր գնահատականը արձանագրելու պահանջի մերժման որևէ ուղղակի հերքում:

3.2. Միաժամանակ, որոշման համաձայն՝

հանձնաժողովի անդամ Արմենուհի Հովսեփյանը վատառողջ լինելու պատճառով չի կարողացել ներկայանալ և խնդրել է հիմք ընդունել իր բանավոր բացատրություններն առ այն, որ դիտորդ Ն. Ալոյանը ներկայացել է տեղամասային կենտրոն, կատարել նկարահանումներ, լուսանկարահանել գրանցամատյանը և կարճ ժամանակ անց առանց որևէ մեկնաբանության հեռացել:

հանձնաժողովի անդամ Անահիտ Դուրգարյանն այդ ժամին նախագահի թույլտվությամբ բացակայել է՝ իր տեղամասում քվեարկությանը մասնակցելու նպատակով, ուստի որևէ տեղեկություններ հաղորդել չի կարող. հանձնաժողովի նախագահ Ռուզան Աբգարյանը չի կարողացել ներկայանալ՝ Լոռու մարզում գտնվելու պատճառով և խնդրել է հիմք ընդունել բանավոր բացատրություններն առ այն, որ ներկայացել է ԹԻՀԿ դիտորդ, ով գրանցվել է, իրեն օրենքով վերապահված իրավունքների շրջանակում նկարահանել է քվեարկության սենյակը, այնուհետև խնդրել է տրամադրել գրանցամատյանը՝ լուսանկարներ կատարելու համար, նախագահի հանձնարարությամբ քարտուղարը տրամադրել է գրանցամատյանը: Կարճ ժամանակ նստել է, այնուհետև հեռացել:

3.3. Հիմք ընդունելով բացատրագրերը Տարածքային ընտրական հանձնաժողովը գտել է, որ բացատրագրերով հերքվում է դիմումում-բողոքով ներկայացված հանգամանքն առ այն, որ դիտորդը գրառում կատարելու պահանջով դիմել է հանձնաժողովին:

3.4. Տարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրել է, նաև, որ վարչական վարույթի նյութերում առկա է գրանցամատյանի համապատասխան էջի լուսանկար, ինչը հավաստում է, որ դիտորդը հնարավորություն է ունեցել լուսանկարելու գրանցամատյանը, ինչպես նաև հավաստվում է, որ ներկա է գտնվել Ցրոպե:

3.5. Որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվել դիմում-բողոքին կցված միջադեպի արձանագրությանը, որը ստորագրված է եղել տեղամասում ներկա գտնված երկու դիտորդների կողմից:

4. Դիմում-բողոքի հիմքերը.

Թիվ 29/36 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Ռուզան Էդիկի Աբգարյանի Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի պահանջների խախտում թույլ չտալու հանգամանքը և ներկայացված դիմումը մերժելը տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից պատճառաբանվել է նրանով, որ 1. դիմումատու դիտորդի կողմից չի ներկայացվել որևէ հավաստի ապացույց առ այն, որ նա ներկայացրել է պահանջ կատարելու գրառում և հանձնաժողովի նախագահը մերժել է, 2. տարածքային ընտրական հանձնաժողովին նույնպես չի հաջողվել հայտնաբերել նման ապացույցներ:

4.1. Գտնում ենք, որ թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի 11.12.2021թ. թիվ 26-Ա որոշումն իրավաչափ չէ և ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմում-բողոքի մերժման համար փաստացի հիմք են ընդունվել թիվ 29/36 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ Ռուզան Աբգարյանի, քարտուղար Գ.Ազիզյանի և հանձնաժողովի անդամ Արտեմ Թումասյանի բացատրագրերն ու բացատրությունները, որոնցով վերջիններս Ն.Ալոյանի կողմից գրանցամատյանում գրառում կատարելու պահանջ ներկայացնելու մասին տվյալ չեն հայտնել (չեն հերքել դիտորդի կողմից պահանջի ներկայացման և հանձնաժողովի նախագահի կողմից մերժման փաստերը), իսկ վերջին երկուսն, ըստ վարույթի նյութերում առկա բացատրագրերի բովանդակության, նաև նշել են, որ Ն.Ալոյանը տեղամասից հեռացել է առանց մեկնաբանությունների և դիտողությունների:

Այդպիսով, Հանձնաժողովը դիմում-բողոքը մերժելու մասին որոշման հիմքում դրել է **բացառապես** թիվ 29/36 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և անդամի պարզաբանումները, այսինքն՝ տարածքային ընտրական հանձնաժողովը դրսևորել է ակնհայտ կողմնակալ մոտեցում՝ դիտորդի կողմից գրանցամատյանում գնահատականը արձանագրելու պահանջի ներկայացված լինելու հանգամանքը հերքված համարելով միայն համապատասխան հանձնաժողովի նախագահի բանավոր բացատրությամբ, քարտուղարի և անդամի գրավոր բացատրություններով, որոնցից առաջին երկուսի կողմից համապատասխան փաստերի ընդունումը ուղղակիորեն հանգեցնելու էր վերջիններիս պատասխանատվությանը, իսկ հանձնաժողովի անդամի կողմից դիտորդի մատնանշած փաստերի որևէ ուղղակի հերքում չի կատարվել: Հանձնաժողովը հրաժարվել է այլ ապացույցներ ձեռք բերելու, այդ թվում՝ այլ ականատես անձանց, օրինակ, տեղամասում ներկա գտնված վստահված անձանց, դիտորդներին, ՉԼՄ ներկայացուցիչներին, հանձնաժողովի այլ անդամներին հրավիրելու և/կամ բացատրություններ վերցնելու հնարավորությունից: **Դրանով իսկ խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված վարչական վարույթի բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության պահանջները, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները** (ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի

պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել):

Ընդ որում, հարկ է նկատել, որ հանձնաժողովի նախագահի բանավոր բացատրության վերաբերյալ վարչական վարույթում առկա չէ ոչ արձանագրություն, ոչ խոսակցության ձայնագրություն, որոնցով հնարավոր կլիներ հավաստել դրանց բովանդակության՝ բողոքարկվող որոշմանը համապատասխանությունը: Նման պայմաններում Ռուզան Աբգարյանի բանավոր բացատրությունը չէր կարող գնահատվել որպես ապացույց և դրվել վարչական ակտի հիմքում:

Տարածքային ընտրական հանձնաժողովը, նաև, արձանագրել է, որ չի հաջողվել այլ ապացույցներ ձեռք բերել, այնինչ դիմում-բողոքին կից ներկայացված է եղել միջադեպի արձանագրություն, որով հաստատվել են դիմում-բողոքում մատնանշված փաստերը, հատկանշական է այն, որ միջադեպի արձանագրությունը ստորագրվել է, նաև, մեկ այլ դիտորդի՝ Նարինե Հովհաննիսյանի կողմից, ով ականատես է եղել միջադեպին: Այս ապացույցը Հանձնաժողովի կողմից առհասարակ չի գնահատվել:

Անդրադառնալով Հանձնաժողովի այն փաստարկին, թե քվեարկության սենյակում գտնվող անձանց բացատրություն տալու համար հրավիրել չի հաջողվել, քանի որ նշված չեն եղել նրանց անձնական տվյալները՝ գտնում ենք այն հիմնավոր չէ, քանի որ Հանձնաժողովը հնարավորություն է ունեցել առնվազն դիմում-բողոքում նշված հեռախոսահամարով զանգահարել դիմողին՝ կամ դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններին՝ հրավիրելով դիտորդին և հայցելով ներկա եղած մյուս դիտորդների կոնտակտային տվյալները:

Ինչ վերաբերում է Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տեղամասային հանձնաժողովի մնացած անդամներից բացատրություն չվերցնելու պատճառաբանությանն առ այն, թե նրանք դիմում-բողոքում նշված հանգամանքների ժամանակ կատարել են կոնկրետ գործառույթներ, հետևապես **«չէին կարող իրազեկվել դիմումում ներկայացված ենթադրյալ խախտման մասին»**՝ գտնում ենք, առավել քան ակնհայտ է, որ նշված փաստարկն անհիմն է՝ հաշվի առնելով այն պարզ իրողությունը, որ հանձնաժողովի անդամի կողմից գործառույթ իրականացնելը չի բացառում վերջինիս կողմից իրադարձություններ տեսնելու և լսելու ունակությունը և Հանձնաժողովը իրավասու չէր առաջնորդվել նրանց տեղեկացված չլինելու կանխավարկածով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը որևէ կերպ չի անդրադարձել նաև դիտորդի դիմում-բողոքով մատնանշված՝ իր իրավունքների իրականացման հետ կապված ճնշման, դիտորդի հետ վիճաբանության մեջ մտնելու փաստերին:

Հիմք ընդունելով նշված հիմնավորումները՝ գտնում ենք, որ, թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի 11.12.2021թ. թիվ 26-Ա որոշմամբ ներկայացված դիմում-բողոքի մերժումը ակնհայտորեն անհիմն է և հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով՝

Խնդրում ենք

1. Անվավեր ճանաչել թիվ 29 տարածքային ընտրական հանձնաժողովի 11.12.2021թ. թիվ 26-Ա որոշումը:

2. Ձեռնարկել միջոցներ`

- վերոգրյալ խախտումները արդյունավետ քննելու ուղղությամբ.
- համապատասխան սուբյեկտների իրավունքների խախտումների արձանագրման և դրանք, ըստ հնարավորության, վերացնելու ուղղությամբ.
- խախտումներ կատարած անձանց և դրանք արձանագրելու և վերացնելու համար պատասխանատու անձանց օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ.

Կից ներկայացվում է`

1. Վիճարկվող 11.12.2021թ. թիվ 26-Ա որոշման պատճենը.
2. Դիտորդի կողմից տրված լիազորագիրը.
3. Դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:
4. Ապացույցներ` միջադեպի արձանագրություն:
5. Դիմումատուների ներկայացուցիչների փաստաբանական գործունեության արտոնագրերը:

Բողոքաբերների լիազորված ներկայացուցիչներ`

Գենյա Պետրոսյան

Դավիթ Գյուրջյան

Էլինա Գյուրջյան

Սերգեյ Գրիգորյան

Կից` 1 ֆայլ

Դիմող`

ԷԼԻՆԱ ԳՅՈՒՐՋՅԱՆ